

Universitäts- und Landesbibliothek Bonn

Tēr Petros A Getadardz

Kostaneanc', Karapet

Wałaršapat, 1897

urn:nbn:de:hbz:5:1-9797

Goussen 3343



ՏԷՐ ՊԵՏՐՈՍ Ա.

ԳԵՏԱԴԱՐՉ



ԿՈՍՏԱՆԵԱՆՑ Կ.



ՀՐԱՄԱՆՈՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀՈՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԱԳԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆԻ


1897

3343

Дозволено цензурою, 28 февраля 1897 г.
г. Тифлисъ.

ՏԷՐ ՊԵՏՐՈՍ Ա.

ԳԵՏԱԳԱՐԶ.



Սերաստիոյ ս. նշանի վանքում ս. Աստուածածնի տաճարի մէջ մի հոյակապ մարմարոնեայ շիրմի տակ հանդչում են այսօր Գետադարձ Պետրոս Ա. կաթողիկոսի նշխարները:

Այն ժամանակ, երբ նորա նախորդների՝ Հայոց քաղմաթիւ երանաշնորհ հայրապետների, շիրմներն անհետացած և նոյն իսկ նոցա հանգստեան տեղն անգամ անձանօթ մնացած են մեզ համար, Պետրոս Գետադարձի շիրմն ութ հարիւր տարուց աւելի պահուած է, կարծես, յաջորդող սերնդին պատմելու և հրահանգներ տալու այն դառն և անօրինակ փորձերի համար, որ ունեցաւ ինքն տ. Պետրոս Ա. իւր քառասնամեայ հայրապետութեան ժամանակ:

Հայոց հայրապետական աթոռի տարագրութեան անդրանիկ կոթողն է այդ շիրմը: Մինչ ցայն՝ ս. Գրիգորի պատուական յաջորդներից ոչ մէկը, գրեթէ, չէր հասել հայրենի հողից դուրս ամփոփուած

լինելու դժբաղդութեանը, Բացառութիւն են
ս. Յովսէփ և Սահակ Գ. Չորափորեցին, որոնցից ա-
ռաջինը ս. Ղևոնդեանց հետ միասին նահատակ-
ուեցաւ 453 թուին Պարսկաստանի Ապար աշխար-
հում՝ իրրև աննկուն ախոյեան քրիստոնէական
եկեղեցու ազատութեան համար, իսկ երկրորդը
կնքեց իւր մահկանացուն 708 թուին Միջագետքի
Խառան քաղաքում, երբ՝ իրրև քաջ հովիւ՝ դը-
նում էր Քամասկոս փրկելու իւր հօտը արարա-
կան ամիրապետի ծանր վրէժխնդրութիւնից, Թէև
նոքա երկուսն էլ օտար երկնքի տակ մեռան՝ իրանց
սիրեցեալ հօտից հեռու, սակայն նոցա մահը մի
ամբողջ աշխարհի փրկութեան պատճառ եղաւ.
յաւիտեան երախտապարտ սերունդը պաշտում է
միշտ ս. Յովսէփի յիշատակն՝ առանց իմանալու
թէ ո՛ւր է նորա գերեզմանը. իսկ Սահակ Գ. Չո-
րափորեցու համար արգէն վաղուց հռչակել է նորա
արժանաւոր յաջորդներից մէկը, թէ «զմեռելու-
թիւն նորա պատուական արար Աստուած քան զմեր
կենդանութիւնս»*.

Նոյնը չէ կարելի է ասել, աւել, տ. Պետ-
րոս Ա. Գետադարձ կաթողիկոսի համար,
նա իրենով սկսեց այն դժբաղդ հայրապետ-
ների շարքը, որոնց վիճակուած էր, ինչպէս

* Յովհ. կաթ. եր. 55.

ա. Ներսէս Շնորհալին է ասում «իրը զայժամն յորսորդաց և ի շանց փախուցեալք»^{*} ապաստարան ընտրել անձանօթ վայրերի անձկութեան մէջ՝ Հայոց հայրապետութեան բնագաւառից շատ հեռու։ Իրը անդրանիկ տարագրեալ հայրապետ՝ ինքն Պետրոս Ա. մեծապէս նպաստեց Հայոց եկեղեցական պատմութեան այդ նոր շրջանի հանդէս գալուն։ Ինքն իսկ ականատես եղաւ իւր հայրենիքի աւերմանն և իւր հօտի վարատմանը։ Իրեն հետ վտարանդի շրջեցաւ եկեղեցական դասը և իրեն հետ միասին տեսան և ողբացին եկեղեցու անշքութիւնն իւր իսկ ժամանակակիցները։ Նորա շիրիմը Սերաստիայում կապում է մեզ, այսպիսով, այն չարարաստիկ շրջանի սկզբնաւորութեան հետ, որ տևեց մօտ չորս հարիւր տարի, մինչև որ 1441 թուին վերջացաւ հայրապետական աթոռի փոխադրութեամբ դէպի Ս. Էջմիածին։

Ա.

Թէ ո՞ւր և ե՞րբ ծնաւ և սնաւ տէր Պետրոս, մեզ յայտնի չէ։ Գիտենք, որ նա Անանիա Ա. Մոկացի կաթողիկոսի քեռորդին է և Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի եղբայրը։ Նոքա երկուսն էլ շատ նշանաւոր տեղ են բռնում Հայոց հայրա-

^{*} Ն. Շնորհ. Ընդհանրական։

պետների շարքում. առաջինն յայտնի է իրրև
խրոխտարարոյ և եկեղեցու միութեան և բարեկար-
գութեան նախանձախնդիր հովիւ, որ և վերականգ-
նեց Աղուանից և Սիւնեաց հետեալ աթոռների
կապը. * իսկ երկրորդն՝ իրրև քաջ վարդապետ՝
իրրև կանգնող Արգինայի մեծ եկեղեցու, որ շինեց
Տրդատ ճարտարապետը, և իրրև հիմնադիր այն-
տեղի փառաւոր գրատան. նորա երկուսն էլ թաղ-
ուեցան Արգինայում, որն հայրապետական աթո-
ռատեղի էր ընտրել 943 թուին տէր Անանիա Ա.
կաթուղիկոսը. **

Պարելի է մտածել, որ տէր Պետրոս
ուսաւ և զարգացաւ Արգինայի կաթուղիկոսա-
րանում իւր եղբօր հսկողութեան ներքոյ. Ուս-
մամբ ճոխացած, այն ժամանակի գիտութեան ճա-
շակն առած և իւր գիտնական հմտութիւններով
հեղինակութիւն վաստակած անձն է տէր Պետրոս,
ինչպէս ծանօթանում ենք նորա մտերիմ բարեկա-
մի Պահլաւունի իշխան Գրիգոր Մագիստրոսի թըղ-
թերից. ուղարկելով ս. Նփրեմի գրքերից մէկը,
Գրիգոր Մագիստրոս գրում է տէր Պետրոսին.
«Թողից, ասում է, զայսոսիկ նախագրութիւն մա-
կագրել Ռեթոֆունիդի քլիսոյ, որ ասեայնի էս բառին
և զանպատան հեղուս քիտոսիւն և շնորհ». անուանում

* Ասողիկ Գ. 7. Ստ. Օրպ. ԾԱ.

** Ասողիկ Գ. 9. 20.

է նորան «գերակատարդ իմաստից»։ նորա գաստիարակութեանն է յանձնում իւր աշակերտներին, չի քաշուում նորան «մէն արնջեան» անուանելու և իրեն «կափուցեալ ի ճառագայթից և խըրթնի և խաւարչտին եղեալ»։ նորա միտիթարական նամակներից մէկն անուանում է «պուետական առասուծիւն»։ թղթակցում է նորա հետ գիտութեան և արուեստի ամեն տեսակ խնդիրների մասին, շատ անգամ նորանից ուսանել ցանկանալով և միշտ իւր տեսութիւնները նորան հաղորդելով, որոնցից երեւում է, որ ինչպէս Գրիգոր Մագիստրոս նմանապէս նորա թղթակիցը տէր Պետրոս քաջ ծանօթ են ոչ միայն Հայոց, այլև յոյն, ասորի, արարական հին և նոր գրականութեանն, աւանդութիւններին և ուսմունքներին։

1019 թուին տէր Սարգիս Ա. Սեանեցին ծերունի Գագիկ Ա. արքայի հաւանութեամբ տէր Պետրոսին իւր ձեռքով կաթուղիկոս օժեց Անւոյ մէջ, * Այնուհետև երկար չքաշեց և մէկը միւսի յետևից իրենց աչքերը փակեցին թէ Գագիկ Ա. արքայն և թէ Սարգիս Ա. կաթուղիկոսը, որն իրեն հաստատող Գագիկ Ա. արքայի մահն 1020 թուին ողբալուց յետոյ՝ ինքն էլ կնքեց իւր մահ-

* Վարդան պատմ. 93. Արիտ. Լաստ. Բ. Սմբատ պատմ. 29.

կանացուն 1021 թուին և ամփոփուեցաւ Հոռոմոսի վանքում, իրեն միահեծան յաջորդ թողնելով տէր Պետրոսին:

Իւր հայրապետութեան առաջին օրերն իսկ տէր Պետրոսին վիճակուեցաւ մասնակցելու քաղաքական գործերի մէջ և հետզհետէ ոխերիմ թշնամիներ վաստկելու նոյն իսկ իւր բարեկամների միջից և այս այն պատճառով, որ ինքն տէր Պետրոս հէնց սկզբից անկարող եղաւ ըմբռնելու իւր դիրքի բարձրութիւնն և զերծ մնալու այն կատաղի մրցման վնասակար ազդեցութիւնից, որ կար իւր ժամանակի հայ իշխանների և բիւզանդական դրան մէջ: Իր կրթութեամբ և հայեացքներով բիւզանդական ճաշակի տէր լինելով, Պետրոս Ա. շուտով յայտնի եղաւ իբրև բիւզանդական կուսակցութեան պարագլուխ: Հանգամանքներն էլ մեծապէս նպաստեցին Բիւզանդիոյ յաջողութեանը: Երարական պետութիւնը մօտեցել էր իւր անկմանը. Սելճուքեան թուրքերն արգէն զինու զօրութեամբ տարածուել տիրել էին Միջագետքին և մտել Հայաստան. Հայոց երկրի իշխաններն իրենց հարևան այլ թագաւորների և իշխանների հետ միասին, կարելի է ասել, գլուխները կորուցել էին և, չկարողանալով միաբանուել, բաժան բաժան էին եղել. ոմանք նեղ դրութիւնից դուրս գալու համար դիմեցին Բիւզանդիոյ օգնութեանն և, իրական օգուտ չգտնելով, իրենց երկր-

ներն յանձնեցին Բիւզանդիոյ կայսերն, և փոխարէ-
նը նորանից ուրիշ երկրներ ընդունելով արևմուտ-
քում, բազմաթիւ ժողովրդով գաղթեցին իրենց
հայրենիքից, Այդպէս արաւ Արծրունեաց Սենեքե-
րիմ թագաւորը, * որ 1016 թուին Վասպուրակա-
նի լայնածաւալ, ամուր և արգաւանդ երկիրը փո-
խեց Սերաստիոյ հետ և չորս հարիւր հազար հայ
գաղթականներով բնակութիւն հաստատեց այնտեղ,
նոյն տարիներում այն է 1021 թուին Բիւզանդիոյ
կայսրը Վասիլ Բ. ծանր զօրքով եկել էր Ափխա-
զաց Գիորգի թագաւորի վերայ, երկու իշխանների
ընդհարման ժամանակ ոտքի տակ էին ընկել Բարձր
Հայքի, Տայոց և Այրարատի միքանի գաւառները.
կայսրը ձմերելու համար իջել էր Խաղտեաց երկի-
րն և այնտեղ կանգ առել:

Այդ բազմաշփոթ իրողութիւնների հետ միա-
սին խռովութիւնը պակաս չէր և Բագրատունեաց
տէրութեան մէջ. Գագիկ արքայի մահից յետոյ
գահի ժառանգութեան պատճառով գժտութիւն էր
ընկել նորա երկու որդւոց Յովհաննէս Սմբատի և
Աշոտի մէջ:

Այսպիսով՝ Սելճուքների երկիւղն հարաւից,
Վասիլ Բ. կայսեր վերահաս արշաւանքն արևմուտքից

* Վարդան, եր 92. Սմէատ սպար. 27 եւլն.

և ընտանեկան երկայտուակութիւնը ներսից այնպէս
էին ծանրացուցել երկրի վիճակը, որ հարկ եղաւ
տէր Պետրոսին միջամտել և հաշտութեան ու խա-
ղաղութեան միջնորդ լինել ամէն տեղ:

Բ.

Առաջին անգամ տէր Պետրոս միացաւ հայ
իշխանների հետ և խաղաղութեան գաշն հաստա-
տեց երկու արքայորդիների մէջ: Գաղիկ Ա. արքա-
յի կրտսեր որդին Աշոտ, որ կտրիճ էր և խիզախ,
դժգոհ լինելով իրեն վիճակուած ժառանգութեան
բաժնից, ուրիշների օգնութեամբ զօրք ժողոված
եկել պաշարել էր Անի քաղաքը. նորա աւագ եղ-
բայրը Յովհաննէս Սմբատ անկարող եղաւ պաշտպա-
նելու մայրաքաղաքն և իւր եղբօրը սանձելու. կո-
տորածների առաջն առնելու համար մէջ մտան կա-
թուղիկոսն և իշխաններից ոմանք. խաղաղութիւնն
հաստատուեցաւ հետևեալ պայմանով. Յովհաննէս
Սմբատ թագաւորելու էր Անի քաղաքում. նորա
մահից յետոյ Անւոյ թագաւորութիւնն անցնելու
էր Աշոտին, որ մինչ ցայն ճանաչուելու էր իրրև
թագաւոր «Դրուց աշխարհին» այն է Անւոյ շրջակայ
միւս երկրների:

Յովհաննէս Սմբատ հայրենի գահի վեր-
այ այսպիսով հաստատուելուց յետոյ՝ դեռ

ապահով շէր ոչ իւր եղբօր կողմից, որ միշտ
հետամուտ էր Անի քաղաքին օր յառաջ տէր
գառնալու, և ոչ էլ այլևայլ շրջակայ թշնամիների
կողմից, որոնց մէջ ամենից վտանգաւորն էր Վասիլ
կայսրը: Այս պատճառով նա պատգամաւոր
ուղարկեց կայսեր մօտ տէր Պետրոսին այն ժամա-
նակ, երբ նա տակաւին Խաղտեաց երկրումն էր:
1022 թուին տէր Պետրոս Ա. մեծ շքով ներկայա-
ցաւ Վասիլ Բ. կայսերն. ինչպէս մի աւանդութիւն
ասում է, * կաթուղիկոսն հանդիպեցաւ կայսերը
Տրապիզոնում, նորա հետ էին տասներկու եպիսկո-
պոս, եօթանասուն արեղայ քահանաներ և երկու
վարդապետ՝ այն է բաղամիմաստն Յովսէփ Լնծուց
վանուց և քաջն և անյաղթն Յովհաննէս Վողեոն»:
վեհի հետ էին նմանապէս զինուորական դա-
սից և աւագներից երեք հարիւր հոգի. իրեն
հետ առել էր թագաւորական տանից ոսկու և
արծաթի գանձեր, ձիեր և ջորիների: Վայսրը տես-
նելով տէր Պետրոսին, շատ ուրախացաւ. նորա ա-
ռաքինութեան համբաւն յառաջուց հասել էր թա-
գաւորին. սքանչելի մարդ էր կաթուղիկոսը չլի ա-
մենայն բարի մասամբ. և «ունէր շնորհ իմն աստ-
ուածական» բժշկելու ախտաժէտներին և հալածե-
լու դեերին, ասում է նոյն աւանդութիւնը:

* Աւեշ Յուշ Հպր. Ա. 109.

Այդ շքեղ հանդիպման ժամանակ և հաստատուեցաւ դաշն Ասիլ Բ. կայսեր և Յովհաննէս Սմբատ Թագաւորի մէջ սորա ներկայացուցչի տէր Պետրոսի միջոցով: Այս դաշնակցութեան մասին է, որ ասոււմ է ժամանակակից պատմիչը, թէ «... էլ շատ իրարմէն գիտեալ և նամակ» և բացատրոււմ է թէ Թագաւորը պատուիրել էր կաթողիկոսին գրել և տալ կայսերը կտակ, որ իւր վախճանից յետոյ Անւոյ և նորա շրջակայ երկրների ժառանգութեան իրաւունքը տալիս է կայսեր: * Մի այլ պատմիչ ասոււմ է, որ Յովհաննէս Սմբատ այսպէս վարուեցաւ այն նպատակով, որպէս զի կայսրը նորան պաշտպանէ իւր թշնամիներից, «պատրիարզին պատուիրէ, ասոււմ է, տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ ի Հոռոմս, եթէ պահէ զնա ի նեղչաց իւրոց»: **

Միւսին 1022 թուականի յունուարի 6-ին տէր Պետրոս կատարեց Ասիլ կայսեր առաջ Զըբորհնէքի հանդէսը, որ իւր փառաւորութեամբ այնպիսի մեծ տպաւորութիւն է թողել ականատեսների վերայ, որ նորանոր հրաշալի աւանդութիւնների նիւթ է դառել: Թէև ժամանակակից Լաստիվերացին *** շատ չափաւոր է խօսոււմ այդ հանդի-

* Արխտ. Լաստ. Բ:

** Վարդան:

*** Արխտ. Լաստ. Բ.:

սակատարութեան վերայ, սակայն ուրիշ յիշատակարաններ * բաւական մանրամասն պատկերացնում են այն մեծ տպաւորութիւնը: Այդ ժամանակին է վերաբերում նորա Գեորգի մականունն ևս. Նշանի Գեորգիէ կոչումը: Արիստակէս ասում է թէ «ի հեղուլ հայրապետին զԳեորգիւն իւն ի ջուրն» ցնցուղս լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն»: այս խօսքերից երևում է, որ Լաստիվերտցին տէր Պետրոսի գետադարձ անուան մասին ոչինչ չգիտէ. հետևաբար այդ անունը հայրապետի ժամանակակիցներին յայտնի չէ:

Այլ կերպ է պատմում միւս յիշատակարանը, որ ինչպէս երևում է, յետագայ դարերի գործ է. այնտեղ այդ երևոյթն աւելի ընդարձակ է նկարագրուած. «այն օրերն» ասում է, վրայ հասաւ Քրիստոսի ծննդեան և աստուածայայտութեան տօնը. կայսրը իւր զօրքերով և քահանաներով ելաւ ջուրն օրհնելու. կաթուղիկոսին էլ իւրայիններով միասին հրաւիրեց գետի եզրը և հրամայեց, որ նախ տէր Պետրոս օրհնէ ջուրն և ապա յոյները. և երբ որ օրհնեց տէր Պետրոս և թափեց մեռոնը ջրի մէջ, և երեք անգամ սուրբ խաչը ջրի մէջ դրեց, խաչից մի սաս-

* Մմբատ Սպարապետ 29. Աւեշ. Յուշ. հայր. Ա. 109. Н. Марр, Сказание о катол. Петре и т. д. 20.

տիկ բոցագոյն ծիրանածաւալ լոյս փայլատակեց և ծիածանի նման գետի վերայ խորան կազմեց, և իր-
քե մի «սրահատաճար Աստուծոյ» բոլորին իրեն
մէջ ընդունեց. բոլորի երեսներն առհասարակ պայ-
ծառացան ինչպէս կարմիր վարդ, և լոյսն այնպէս
էր արձակուում խաչից ինչպէս յորդահոս ջուրն
աղբիւրներից. կաթուղիկոսի ձեռին սուրբ խաչն
երևում էր ինչպէս բոց. նորանից գոյնզգոյն լոյսեր
էին արձակուում խաչաձև և այն խաչի չափով, և
գնում էին ջրերի վերայ իրրև թռչուն, իրարուց
բաժան բաժան սլանալով, և անոյշ հոտով լցուում
էին ամէնքը. Այնտեղ ժողովուած բազմութիւնն
ահարեկուած՝ Տէր ողորմեա՛ էին ասում. երբ որ
աղօթում էին, լոյսը միագունդ եղաւ և երեք ան-
գամ դիպաւ ջրին և ապա ամփոփուեցաւ խաչի
ծոցում. և գետի ջուրը յետ դառաւ և մի կողմով
կանգ առաւ փոքր ինչ. այն ժամանակ ամբոխը վա-
խեցած՝ երեսի վերայ ընկաւ գողալով. կաթուղի-
կոսն երեք անգամ սուրբ խաչով կնքեց գետը և
աղօթեց, որ գետի ջուրն հոսէ իւր յառաջուայ
ընթացքով. այդ միջոցին գետը դարձեալ հոսեց. Աս-
տիլ կայսրը և բոլոր նորա զօրքն ընկան կաթուղիկո-
սի ոտները, և «մեծագոչ հաւաչանօք» համբուրում
էին սուրբ Նշանը, և օրհնեալ ջուր էին առնում
իրենց գլխին. թագաւորն իւր թագը գետին դրեց, և
հրամայեց տէր Պետրոսին ափով օրհնեալ ջուր ա-

ծելու իւր գլխին, և առաւ գետարգել սուրբ Նշանըն իւր ձեռքը, և անյագ համբուրում էր, և նորանով կնքում էր իւր զգայարանները. նոյնպէս և մետրապօլիտն և բոլոր ժողովուրդը «եռափափագ համբուրիւ» գրկում էին սուրբ Նշանն և կաթողիկոսի աջը և համբուրելու ժամանակ շատերին առողջութիւն էր լինում: Եւ մինչև օրուայ տարածամելը չվերջացաւ ժողովրդի համբուրելը ամբոխի բազմութեան պատճառով:

Այսպիսի փառաց պսակ հիւսուեցաւ ահա՛ տէր Պետրոսի ճակատին այն ժամանակ, երբ նորա ձեռքով նոր էր կատարուել դժբաղդ Անոյ առաջին սակարկութիւնն և վաճառումը, որ և շատ եղերական վաղճան ունեցաւ ոչ միայն տէր Պետրոսի, այլ նաև ամբողջ ազգի և աշխարհի համար:

Գ.

Յովհաննէս Սմբատի վիճակն երկու կողմից ապահովելու այսպիսի մի զօրաւոր միջնորդ հանգիստանալով, տէր Պետրոս մեծ հեղինակութիւն ձեռք բերեց քաղաքական շրջաններում: Ամենից աւելի երախտիք ունեցաւ նա, անշուշտ, նոյն ինքն Յովհաննէս արքայի վերայ, բայց շատ չանցաւ, որ նորա և արքայի մէջ գժտութիւն ընկաւ, որը վերջ ի վերջոյ շատ սուր կերպարանք առաւ:

Գժտութեան բուն պատճառները մեզ յայտնի

չեն. յիշուում է* այն, որ տէր Պետրոս երկար ժամանակ բացակայ է եղել աթոռից. ինչպէս երևում է, Խաղտեաց երկրից կաթուղիկոսն անմիջապէս գնացել է Սերաստիա Սենեքերիմ թագաւորի մօտ, ուր և մնացել է մի քանի տարի. այնտեղից վերադարձաւ նա Անի 1029 թուին, երբ լսեց Պարսի Աբաս թագաւորի մահը, ժողովուրդը, քահանաներն և Յովհաննէս Սմբատ ծուռ աչքով էին նայում կաթուղիկոսի երկար բացակայութեան վերայ: Այդ է համարւում և նոցա դժկամակութեան առիթը: Քանիոր ժամանակակից Լաստիվերտցին և նորանից յետոյ Մատթէոս Աւուհայեցին և Սամուէլ Անեցին, որոնք տէր Պետրոսի կաթուղիկոսութեան ժամանակը մանրամասն են նկարագրել, այս հանգամանքը չեն յիշում, դժուար է այդ և համարել միակ պատճառ դժտութեան կաթուղիկոսի և թագաւորի մէջ:

Պատմութիւնը թանձր քօղի տակ է ծածկել տէր Պետրոսի կեանքի այն ժամանակի նկարագրութիւնը, որ վերաբերում է նորա տեսակցութեանը Վասիլ կայսեր հետ և ապա Արծրունեաց Սենեքերիմ արքայի մօտ

* Չամչեան, Պատմ. Հատ. Բ եր. 912 ցաւալի է, որ Հ. Չամչեան որոշ չէ յիշել իւր այս տեղեկութիւնների աղբիւրը:

Սերաստիա բնակելուն և վերադարձին գէպի իւր
աթոռը: Կան սակայն այլ հանգամանքներ, որոնք
բաւական լուսաւորում են տէր Պետրոսի գոր-
ծունէութեան այլ կողմերը և տեղիք են տալիս
մտածելու, որ կաթուղիկոսի և թագաւորի մէջ
ծագած գծտութեան պատճառը միայն նորա երկար
բացակայութիւնը չէր:

Տէր Պետրոս, քաղաքական գործերի մէջ
մտնելով և ազդեցութիւն ձեռք բերելով, ինքն ի-
րեն գրել էր այնպիսի պայմանների մէջ, որ նորա
ներկայութեամբ կատարելապէս նսեմանում էր
թագաւորի և իշխանների շուքը:

Խաչիկ Ա. Արշարունի կաթուղիկոսի եղբայրը լի-
նելով նա, ինչպէս երևում է, ունեցել է հայրենական
հարստութիւն Արշարունեաց գաւառում: Մխիթար
Այրիվանեցին յիշում է, * որ նա շինեաց զՍարգսի
և զԾառաբար: Իսկ Մատթէոս Ուռհայեցին ** ա-
սում է, որ «յորժամ էր տէր Պետրոս յաթոռ
հայրապետութեան ի Հայաստան աշխարհին, ունէր
կազմութիւն հարեանեաց տուեալ ի թագաւորացն Հա-
յոց հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիք և շա-
հաւէտ ընտիր ընտիր: Եթէ նոյն իսկ այս բազմա-
թիւ գիւղերի մի մասն համարելու լինինք իրրև

* Մխ. Այր. ժամ. 58: Կ. Կոստ. 1844: Գր. 1844: Գր. 1844:

** Մատթ. Ուռհ. 184: Կ. Կոստ. 1844: Գր. 1844:

Հայրենական կալուած (հայրենեաց), դարձեալ ակ-
ներև կը լինի, որ տէր Պետրոս ունեցել է ժառան-
գական մեծ հարստութիւն, որի մէջ յիշուած է
Սուրմառի բերդաւանի նման նշանաւոր կալուածքը:
Մի և նոյն ժամանակ Արիստակէս Լաստիվերտցին *
պարզ ասում է տէր Պետրոսի համար թէ «յոյժ
ներող էր հանցոց, որ և բազմաժամանակեան բարեբան զնա-
նորա գանձերի և հարստութեան տէր լինելն
յայտնի է և այն հանգամանքից, որ տէր Պետրոսի
մահից յետոյ բիւզանդական արքունիքը շատ նեղեց
և տանջեց նորա յաջորդին և քեռորդուն՝ տէր
Խաչիկ Բ. կաթողիկոսին ** և ուրիշ շատերին,
պահանջելով նոցանից հանգուցեալ կաթողիկոսի
գանձերը:

Եւ յսպէս ուրեմն՝ տոհմական կալուած-
ների ժառանգութեան տէր լինելով, գանձեր գան-
ձելով և հարստութեան յետևից ընկնելով, տէր
Պետրոս Ա. ոչ միայն իւր խոնարհ առաքելական
կոչման ճանապարհից շեղուած էր երևում իւր
ժամանակակիցների աչքում, այլ և աշխարհային
մեծութեան, արքայավայել իշխանական կեանքի
չրջանը մտնելու ձգտումներով զրգոում էր կաս-
կած և տհաճութիւն թագաւորի և իշխանների մէջ:

* Արիստ. Լաստ. ԺԲ.

** Մատթ. Ոււհ. 114.

Ճոխ և փարթամ էր նաև տէր Պետրոսի կաթողիկոսարանը. աւանդական տասներկու եպիսկոպոսներից * զատ, որոնք միշտ եղել են հայրապետանոցում իբրև աթոռակից, գործակից և խորհրդակից հայրապետի, Գետադարձ կաթողիկոսի վեհարանում մշտապէս կային չորս վարդապետ, վաթսուներկու կրօնաւոր և հինգ հարիւր աշխարհական երէց. «չէր նուաստ աթոռ հայրապետութեան քան զթագաւորութեանն Հայոց» ասում է պատմիչը. ** Պաթողիկոսի ձեռքի տակ կային հինգ հարիւր եպիսկոպոս իբրև գաւառատեսուչ հինգ հարիւր թեմի վերայ. Արդեօք իրենց կոչման վսեմութիւնը ճանաչող գործունեայ և անձնուէր մի բազմութիւն էին հայրապետանոցի այս հարիւրաւոր անդամները, թէ անձնաշահ ապիկար պաշտօնեաներ, պատմիչը չի յիշում: Ընդհանուր վիճակի նկարագրութիւնից բաւական դիւրին է սակայն մակարերել, որ բազումք էին կոչեցեալքն և սակաւք էին ընտրեալք: Բազմամարդ և մեծափարթամ Ընւոյ հայրապետանոցի բարոյական վիճակի մասին այսպիսի մի եզրակացութիւն անելու տեղիք է տալիս ժամանակի իմաստուն վարդապետներից մէկի Յովհաննէս Աղեռնի տուած բացատրութիւնը 1036 թուին տեղի

* Փաւստ. Բիւզ. 2. 5.

** Մատթ. Ոււհ. 184.

ունեցած արևի խաւարման մասին:

Աւանդութիւնն * ասում է, որ բնութեան այդ ահաւոր երևոյթը մեծ սարսափ ազդեց ամենքին. օրով ցերեկով լուսաւոր երկինքը մթնեց, բոլոր աստղերը տեսանելի եղան ինչպէս գիշեր ժամանակ. այդ խաւարման հետ միասին եղաւ և շարժ. «և գոչեաց առհասարակ ամենայն արարածք և հնչեցին ամենայն լերինք և բլուրք, և դողաց սասանելով լերինք և ամենայն ապառաժք». ասն ու երկիւղը պաշարեց ամենքին. Այն ժամանակ տէր Պետրոս Ա. և Յովհաննէս Սմբատ ուղարկեցին Յովհաննէս Առղեոն վարդապետի մօտ Գրիգոր Մագիստրոսին, Վեստ Սարգսին և այլ իշխանների և մի քանի քահանաներ, որպէսզի այդ ահաւոր նշանի բացատրութիւնն իմանան նորանից. Նոքա եկան և տեսան, որ Յովհաննէս Առղեոն երեսի վերայ ընկած՝ լաց է լինում և անմխիթար սգում է խորին տրտմութեան մէջ. Պատգամաւորներն ըստիպուած էին երկար սպասել և իրենք ևս սկսեցին լալ և ողբալ. նոցա այդ սուգը նկատելով, ս. վարդապետն սկսեց խօսել, լալով և հառաչելով, և ողբալ բոլոր քրիստոնեաների, քահանայական դասի և ս. Եկեղեցու վերայ, և մեկնել այդ ահաւոր

* Մատթ. Ուռհ. 75. Маттѣ, Сказ. о кам. Петръ и Ю. I. Козеруб 22. Սմբատ Սպար. 35.

նշանը, Այսուհետև, ասու՛մ է, բոլոր քրիստոնեաները պիտի խաւարի մէջ մնան, եկեղեցու կարգերը պիտի խանգարուին, աստուածապաշտութիւնը պիտի թուլանայ, ամեն ոք պիտի արհամարհէ վարդապետների խօսքը, և բանի տեղ չգնէ սուրբ հայրապետների կանոնական հրամանը. այսուհետև շատ հերձուածներ պիտի լինին հայրապետների ծուլութեան պատճառով, որովհետև պիտի տկարանան և հաւատոյ քննութիւն չանեն, արծաթի համար հաւատը մէկդի պիտի թողնին. այսուհետև առաջնորդների հակառակութեան պատճառով սուրբ եկեղեցու դռները փակուելու են, արծաթսիրութեան պատճառով շատ անարժանների պիտի տան ձեռնադրութիւն, և ամեն պղծուածի պիտի քահանայ ձեռնադրեն. սրբերին և առաքիլներին վիրաւորում են, անարատներին զրկում են քահանայութիւնից, և արծաթ չունենալու պատճառով նոցա չեն տալիս ձեռնադրութիւն:

Յովհաննէս Առդեռնի այս ահաւոր խօսքերն արևի խաւարման և շարժի ահաւոր նշանից աւելի սարսափ ազդեցին ամենքին, մանաւանդ այն պատճառով, որ նոյն ազդարարութիւններն եղել էին նոյն վարդապետի բերանով նաև 1023 թուին, այն է տէր Պետրոսի կաթուղիկոսութեան առաջին տարիներն, և ուշադրութիւն դարձնող չէր եղել: Արդար մարդն այժմ բաց աչքով տեսնում է

չարիքը՝ համարձակ բողոքում է կաթուղիկոսի և
թագաւորի պերճափայլ պատգամաւորների առաջ
և ազգու կերպով ուղղութեան հրաւիրում նոցա։
Ս. վարդապետի բացատրութեան մասին մնա-
ցած այս աւանդութեան մէջ գեղեցիկ պատկերացած
է ժամանակի բարոյական վիճակը։ Վարելի է ասել,
թէ բարոյապէս շատ տխուր և անմխիթար վիճակ է
եղել այդ թէև նիւթապէս խիստ բարգաւաճեալ և
փարթամ Յովհաննէս Վոզեռնի մեղադրանքը և կե-
ղեցական դասի մանաւանդ առաջնորդների, դէմ է-
ոչ տէր Պետրոսի բազմամարդ հայրապետանոցը և
ոչ էլ նորա տեսչութեան տակ գտնուած ընդար-
ձակածաւալ թեմերի հարիւրաւոր տեսուչները չէին
համապատասխան իրենց կոչմանն այն պատճառով,
որ ինքը կաթուղիկոսը չէր ճանաչում իւր ուղիղ
պարտականութիւնները։ այդ իսկ ունի աչքի առաջ
Յովհաննէս Վոզեռնի որ իւր բողոքի մէջ կարգերի
եղծման և կրօնի խանդարման պատճառ համարում
է յատկապէս հայրապետների ծուլութիւնն և ար-
ծաթսիրութիւնը։ Հասկանալի է, ուրեմն թէ ին-
չո՞ւ հետզհետէ պակասում էր տէր Պետրոսի վար-
կը թագաւորի և նախարարների աչքում, որոնք
անշուշտ չէին կարող շտեմնել, որ կաթուղիկոսն
իւր բազմամարդ հայրապետանոցով իրենց գործով
չեն պարապում և նորանոր շարիքների պատճառ
են լինում, Խուլ և անձայն տրտունջը հետզհետէ

զօրանալով ի վերջոյ՝ բարձրաձայն լսելի եղաւ
«քաջ և անյաղժ» վարդապետի բերանով որ բնու-
թեան ահաւոր նշանների երևալն համարեց աստ-
ուածային պատիժ Հայոց առաջնորդների թիւր
ուղղութեան համար։ Առանց ազդեցութեան չմնաց
այդ խիստ բողոքը։ 1037 թուին տէր Պետրոս
«Յիւզի» հեռացաւ իւր աթոռից և գնաց Վաս-
պուրականի Չորոյ վանքը* (Սալնապատի վանք),
ուր և մնաց նա չորս տարի**

Դ.

Թէ ինչո՞ւ տէր Պետրոս Ա. պէտք համարեց
յատկապէս Վասպուրականի Չորոյ վանքն ապաս-
տանել և այն էլ «Յիւզի» յայտնի չէ։ Գիտենք,
որ այդ ժամանակ Վասպուրականն ամբողջապէս
անցել էր Բիւզանդիոյ իշխանութեան տակ և այն
տեղի կառավարութիւնը բիւզանդական էր։ Այդ
հանգամանքը չէր կարող լաւ տպաւորութիւն թող-
նել ոչ Հայոց թագաւորի, ոչ իշխանների և ոչ էլ
նոյն իսկ եկեղեցական դասի վերայ։ Այդ ևս ա-
ռաւել լաւ նշանակութիւն չպիտի ունենար նաև

* Մատթ. Ուռհ. 86 90. Սամ. Ան. 107. Վարդան
98. Կիրակ. Գանձ. 51.

** Սամ. Ան. մի քանի ձեռագիր օրինակների մէջ
նշանակուած է «չորս ամիս».

կաթուղիկոսի համար այն պատճառով, որ այգալիսի մի երևոյթ տեղի ունեցած էր և մի ուրիշ անգամ, և պատճառ էր եղել ծանր գայթակղութեան ամբողջ երկրի մէջ, Պետրոս Ա. կաթուղիկոսին իրեն և իւր ժամանակակիցներին շատ լաւ յայտնի էին, թէ ի՞նչ անցքեր էին անցել գրեթէ մի դար յառաջ Վահան Ա. կաթուղիկոսի պատճառով նոյն իսկ Անուոյ մէջ Աշոտ Շահնշահի ժամանակ:

Վահան Ա., որ կաթուղիկոս ընտրուեցաւ Անանիա Ա. Մոկացուց յետոյ 965 թուին, կամեցաւ քաղկեդոնիկների հետ սէր և միաբանութիւն հաստատել. «սկսաւ պատկերս բերել ի Վրաց և գնել ի վերայ սեղանոյն. և հրամայէր յամենայն եկեղեցիս զնոյն առնել ըստ Հոռոմոց սահմանին և զսեղանսն կօնիւք (պատկերներով) զարդարել և առանց կօնի ոչ մատուցանել պատարագ». նորա այդ արարքները տեղիք տուին մտածելու, որ նա «գաշնադիր է ընդ Յոյնս և կամի սպրդել յեկեղեցի զաղանդ. նոցին»: Գժգոհութիւնն հասաւ Աշոտ արքային, որը հրամայեց ժողով գումարել և քննել յիշեալ գործերը: Վահան Ա. խոյս տուեց և փախաւ Վասպուրական Ապուսասը Համազասպ թագաւորի մօտ, և բնակեցաւ նոյն Զորոյ վանքում: Անուոյ ժողովի մէջ կային շատ յայտնի վարդապետներ, որոնցից մէկն էր և Արշարունեաց եպիսկոպոսը՝ Խաչիկ, այն է Պետրոս Գետադարձի եղբայրը: Ժողովն աթոռից մերժեց

տէր Աւհանին, և տեղը նոր կաթուղիկոս ընտրեց Սեանայ վանական տէր Ստեփաննոսին, նոր կաթուղիկոսը բանադրեց Աւհանին, իսկ վերջինս, օգնական ունենալով Ապուսասէ Արծրունուն, բանադրեց Ստեփաննոսին. և այսպիսով, ինչպէս պատմիչներն են ասում, «Երկոցունց կողմանց նզովիւք լցին զաշխարհս Հայոց»: Միւսին ժամանակի մէջ երկու կաթուղիկոս, երկու թագաւորութիւն և երկու խումբ եկեղեցականների հանդէս եկան, որոնք շատ նորանոր չարիքների պատճառ պիտի լինէին, եթէ «վերին ակնարկմամբ» երկու հայրապետներն էլ մի տարուայ մէջ (ըստ Օրպ. մի օրուայ մէջ) չմեռնէին և Խաչիկ Արշարունին կաթուղիկոս չընտրուէր, որ իւր բարձր կոչումը լաւ հասկանալով, ոչ միայն «միապետեալ խաղաղացոյց զաշխարհս Հայոց», այլ մինչև անգամ ազդու կերպով պաշտպանեց Հայոց եկեղեցին Յունաց հալածանքների և կրօնական անտեղի յարձակումների * դէմ:

Քանի որ այս ամենը քաջ յայտնի էին Պետրոս Ա. կաթուղիկոսին, անհասկանալի է մնում մեզ համար այն թէ ինչո՞ւ նա ծածկաբար հեռացաւ դէպի Չորոյ վանքը, որ Աւհանի արարքներն

* Ստ. Ասող Գ. 8. 9. 20. 21. Ստ. Օրպ. ԾԲ.:

յիշեցնելու լաւ առարկայ էր իւր հակառակորդների աչքուով Արդեօք կաթուղիկոսը լրջօրէն կշռել էր իւր արածի հետեանքներն և ինչ վախճան էր սպասուում նոյնպէս չգիտենք. միայն յիշուում է որ նորա հեռանալն «անչափելի տրտմութիւն» պատճառեց Հայոց աշխարհին, որ Յովհաննէս արքայն և իշխանները, թերևս բիւզանդական միջամտութիւնից կասկածելով, միջոցներ գործ դրին նորան իւր աթոռը վերադարձնելու, և որ կաթուղիկոսի հեռանալու պատճառներից մէկն այն է եղել որ թագաւորն և նախարարները նորան չէին լսում: Սակայն այս ամենը չի արդարանում բուն գործի հետեանքներով. ահա թէ ինչպէս, թագաւորն և նախարարները ճննդութեամբ թուղթ գրեցին տէր Աետրոսին և «հանդերձ մեծ երդմամբ» խոստացան «լինել ունկնդիր ամենայն հրամանաց նորա և ականջալուր ամենայն լուսաւոր վարդապետութեան նորա»: նոքա մի և նոյն ժամանակ դիմեցին Հռոմոց իշխաններին, որոնք Ասսպուրականի կողմնապահ վերակացուներն էին, և նոցա միջնորդընտրեցին տէր Աետրոսին համոզելու. կաթուղիկոսն այդ ամենին հաւատալով, վերադարձաւ դէպի իւր աթոռը: Այն ժամանակ, երբ նա մտնելու էր Անի, Յովհաննէս թագաւորի հրամանով նորան կալանաւորեցին և բանտարկեցին Բջնի ամրոցում. բանտի մէջ կաթուղիկոսը մնաց մի տարի և հինգ

ամիս: * Նորա կեանքի այդ ժամանակին է վերաբերում Պրիգոր Մագիստրոսի թղթերից մէկը, որ գրել է կաթողիկոսին, ուղարկելով նորան ս. Եփրեմի Հաւատոյ գիրքը, «զընկերդ քո է +...» և «...» ըղձալի քեզ քան զոսկի և քան զարծած»:

Տէր Պետրոսին բանտարկել տալուց յետոյ Յովհաննէս Սմբատ մարդ ուղարկեց Սանահնի վանքըն և բերել տուեց այնտեղի վանահօրը մեծն Պէոսկորոսին, որին և կաթողիկոս զրին նորա փոխարէն: Պէոսկորոս կաթողիկոսութիւն արաւ մի տարի և երկու ամիս, բայց «ոչ ըստ հրամանացն Աստուծոյ»: ոչ ոք չէր ընդունում նորա ձեռնադրութիւնը. նորա անունը չյիշուեցաւ եկեղեցու մէջ, որովհետև նորան անարժան էին համարում հայրապետական պատուին. նորա ձեռնադրութեան ժամանակ մինչև իսկ չժողովուեցան եպիսկոպոսները, քահանաներն և վանքերի առաջնորդները. ինքը Պէոսկորոս անարժանութեամբ վարեց իւր պաշտօնը. շատ անարժանների եպիսկոպոս ձեռնադրեցնոցա, որոնք նախորդ հայրապետներից բանադրուած էին իրենց յանցանքների համար, բոլորին յառաջ քաշեց. այսպիսով նա միանգամայն ընկաւ ժողովրդի աչքից. «կարի յոյժ խարեալ եղև մեծ հոն»:

* վարդան. 98. Ջամբու. 15. (նշանակուած է ժԸ ամիս):

տորն Գեոսկորոս և կորոյս գանչափ պատիւն զոր
ուներս ասում է պատմիչը: * Հայոց երկրի եպիս-
կոպոսներն և վարդապետները, նախարարներին
և թագաւորին ճանաչելով այս չարիքների նախա-
պատճառ, նզովեցին նոցա և բանադրանք կարդացին
այն հակառակութեան համար, որ նորա յառաջ
բերին եկեղեցու մէջ: Այսպիսի նզովքից սարսա-
փելով, թագաւորն և իշխանները կամեցան վերա-
դարձնել տէր Պետրոսին իւր աթոռը, բայց նա
յանձն չառաւ և, շնայելով, որ նորանից թո-
ղութիւն էին խնդրում, նա դարձեալ շահամա-
ձայնեցաւ: Գործին վերջ տալու համար թագաւորն
և իշխաններն ստիպուեցան թուղթ գրել Աղուանից
ծերունի Յովսէփ կաթուղիկոսին և խնդրել, որ
գայ բարեխօս լինի տէր Պետրոսի առաջ և նորանից
իրենց համար ներումն առնելով, կրկին դարձնէ
նորան իւր աթոռը: Տէր Յովսէփ Աղուանից եպիս-
կոպոսների հետ միասին եկաւ Անի. այնտեղ 1039
թուին մեծ ժողով եղաւ. ներկայ էին եպիսկոպոս-
ներ, վանական առաջնորդներ, կրօնաւորներ, վար-
դապետներ, իշխաններ, ընդամենը չորս հազար
մարդ: Ժողովին նախագահում էր ծերունի Յով-
սէփ կաթուղիկոսը: Եղելութիւնը պարզելուց յե-
տոյ ժողովը մեղաւոր ճանաչեց Գեոսկորոսին:

* Մատ ՈԼԼՏ. 88:

զրկեց նորան հայրապետական պատուից, նորա զլխի վերայ պատառելով հայրապետական քօղը՝ որ հին ժամանակ կաթուղիկոսները սովորութիւն ունէին կրելու: * Միւսնոյն ժամանակ՝ ժողովը բանադրեց Ռէսուկորոսի ձեռնադրածներին և արգելեց, որ ոչ ոք նոցա քահանայութիւնը չվերադարձնէ՝ ապա ժողովը հայրապետական աթոռի վերայ հաստատեց տէր Պետրոսին, որով խաղաղութիւնը վերականգնեցաւ եկեղեցու մէջ. իսկ Ռէսուկորոս ամօթահար վերադարձաւ իւր վանքը Սանահին, ուր երկար ժամանակ առաջնորդութիւն արաւ, կրելով և հայրապետական անունը: **

Ե.

Թէպէտև տէր Պետրոս Ա. վերստին ստանձնեց 1040 թուին Հայոց հայրապետութիւնը, սակայն նորան վիճակուած չէր խաղաղութեան հովիւ լինելու: 1041 թուին Յովհաննէս Սմբատի և նորա եղբօր Աշոտի մահով խռովութիւնների մի նոր շրջան սկսուեցաւ: Անզաւակ արքայի ժառանգութեան վէճերին մասնակից եղաւ տէր Պետրոս, որ ինքն էր եղել սկզբնական միջնորդը վիճողների մէջ:

* Կիր. Գանձ. 51:

** Զաւ. Ս. եղ. Ճանապ. Ա. 28. 52:

Առաջինը Բիւղանդիոյ կայսրներն էին, որ
իրենց ժառանգ էին համարում Անույ թագաւո-
րութեան, ապա ցոյց առնելով այն թուղթը, որ
Յովհաննէս Սմբատի կողմից 1022 թուին տուել էր
Վասիլ Բ. կայսերն Հայոց կաթուղիկոսը, Ինչպէս
պատմում են, Վասիլ կայսեր եղբայրն և յաջորդը
Պոստանդին Ը. 1028 թուին իւր մահուան ժամա-
նակ կանչել տուեց իւր մօտ Աիրակոս քահանային,
որ երբեմն Հայոց կաթուղիկոսարանի «հիւրատեսն»
էր եղել, և նորան յանձնեց Յովհաննէս արքայի
թուղթը պատուիրելով հասցնել Հայոց թագաւո-
րին: * Սակայն Աիրակոս իրեն յանձնուած աւանդն
իւր օգտին գործ դրեց, և մի ժամանակ յետոյ
վաճառեց Միքայէլ կայսերը, Թէև Յովհաննէսի
մահից յետոյ Միքայէլին չյաջողուեցաւ տիրել
Հայոց թագաւորութեանը, սակայն յիշեալ չարա-
բաստիկ թուղթը մնաց իր, և փաստ, որով ըիւ-
զանդական արքունիքը իրաւունք էր համարում
պահանջել, որ Անին իւր տիրապետութեանն յան-
ձնուի:

Հայոց նախարարների մէջ այդ խնդրի պատ-
ճառով ազմուկը զօրացաւ, Մի կողմը հաւան էր
մայրաքաղաքն յանձնելու, միւս կողմը հակառակ,
Անժառանգ մնացած գահին տիրել ուզեց նոցա-

* Արիստ. Լաստիվ. 36:

նից յէկը՝ Վեստ Սարգիս * որ Յովաննէս ար-
քայի մահուան ժամանակ Հայոց արքունի տան հո-
գաբարձուն էր. նա ըսլոր թագաւորական գանձերն
իրեն մօտ առաւ և ուզեց թագաւորել Շիրակայ և
նորա շուրջը գտնուող գաւառների վերայ. նորան
հակառակ զինուեցան Պահլաւունի իշխանները,
որոնց պարագլուխն էր Վահրամ ծերունին. նո-
քա միարանեցան Պետրոս Ա. կաթուղիկոսի հետ
և Յովհաննէսի եղբօր Աշոտի որդուն տասն և
ութնամեայ Գագիկին անմիջապէս թագաւոր ընտ-
րեցին այն նպատակով, որ դահի ժառանգութեան
խնդիրը փակուի և բաժանուածները միարա՛ին.
Գագիկը քաջ սրտի տէր, իմաստուն և լաւ կրթ-
ուած երիտասարդ էր. կաթուղիկոսն հանդիսաւոր
կերպով օժեց նորան թագաւոր:

Երբ յայտնի եղաւ, որ մայրաքաղաքն
և տէրութիւնն ունի իւր օրինաւոր տէրն և
ժառանգը, այն ժամանակ Վեստ Սարգիս,
որ Հայոց արքունի գանձերով փակուել էր
Անւոյ միջնաբերդում, ահամայ կամօք խոնարհե-
ցաւ նորապսակ արքայի առաջ և անձնատուր եղաւ.
Գագիկ Բ. նուաճեց ըսլորին և երկու տարի խաչաղ
կառավարեց. Սակայն 1044 թուին Աոստանդին Թ.
Մոնամախ կայսրը, կամենալով Անին գրաւել, Վեստ

* Արիստ. Լաստիվ. 37.

Սարգսի խորհրդով հրաւիրեց Գագիկ Բ. արքային
Վ. Պօլխոս Թէպէտե թագաւորն զգում էր վտանգն
և չէր ուզում գնալ, բայց նախարարները, որոնց
մէջ և Վեստ Սարգիս, սկսեցին համոզել նորան,
որ գնայ. միւսնոյն ժամանակ Պետրոս Ա. կա-
թողիկոսին էլ միջնորդ ընտրեցին, երգումն արին
և ուխտեցին հաւատարիմ մնալու թագաւորին և
պահպանելու Անին և տէրութիւնը մինչև արքայի
վերադարձը: Աւանդում են, որ այդ երգման գիրն
աւելի ապահով և անփոփոխելի ճանաչելու համար
նոքա չխղճահարուեցան մինչև անգամ «գրիչը Պե-
նարարի արեան մէջ թաթախելու» և այնպէս վա-
ւերացնելու իրենց ուխտը: * Այն ժամանակ Գագիկ
Բ. Անուոյ բանալիներն յանձնեց Պետրոս Ա. կա-
թողիկոսին, նմանապէս և բոլոր երկրի հոգա-
ցողութիւնն ու խնամքը նորան հաւատաց, ու ինքը
ճանապարհ ընկաւ դէպի Վ. Պօլխոս «իրրև զձուկն
ի կարթէ ըմբռնեալ կամ իրրև զհաւ ի ծուղա-
կաց»: **

Երբ դժբաղդ արքայն հեռացաւ իւր հայ-
րենիքից, դաւաճանութեան խորհուրդն անմիջապէս
յայտնի եղաւ: Առաջինը դրժեց իւր ուխտին Վոս-
տանդին Թ. կայսրը, որ խոստացել և երգուել էր

* Մատթ. Ուռհ. 110. Սմբ. Սպար. 45:

** Արիստ. Լատտ. 41:

բարեկամութեան դաշն դնել և Անւոյ թագաւորու-
թիւնը Գաղիկի վերայ հաստատել: Նա արգելեց
Հայոց թագաւորին և ստիպամբ պահանջեց նորա-
նից՝ հրաժարուելու Անւոյ ժառանգութեան իրա-
ւունքից: Քաջասիրտն Գաղիկ, որ դաւով նեն-
գութեամբ ընկել էր բիւզանդական ծուղակի մէջ,
երկար դիմադրեց և պաշտպանեց իւր իրաւունքները:

Երբ այս տխուր համբաւն հասաւ Անի, այն-
տեղ ևս դաւաճանութեան ոգին զօրացաւ այն ան-
ձինքների մէջ, որոնք սարսափելի երգմամբ ուխ-
տել էին հաւատարիմ մնալ արքային, Իշխաններն
երկպառակեցան: ոմանք ուզեցին Անին յայնձնել
Գաւիթ Գունացուն, որի քոյրը Գաղիկ Բ. թա-
գաւորի կինն էր: * ոմանք ուզեցին Ափիսաղաց
թագաւորին Բագարատին տալ Անին: Պահլաւունեաց
իշխանը Գրիգոր, թէև անձամբ բարեկամ չէր Գա-
ղիկին, այլ կամենալով ազատել Հայոց գահը,
աճապարեց դէպի Բիւզանդիա, բայց անկարող
եղաւ ազգելու: Թերևս նորան խորհրդակից էր և
տէր Պետրոս, որի ազգեցութեամբն և յանձն
առած է երևում Գրիգոր այդ երկար և քաղաքա-
կանապէս վտանգաւոր ճանապարհորդութիւնը: Իւր
կարողութիւնն այդ խնդրի մէջ Գրիգոր պատկերա-
ցնում է մի առակով, որ պատմել է իւր մէկ թղթի

* Արիստ. Լաստ. 72.

մէջ՝ ուղղած առ Հայոց հայրապետը. Արտուտը վախենալով, որ չլինի թէ երկինքը փուլ գայ, պատմում է նա, փորի վերայ է ընկնում, և ոտքը վեր է տնկում, աշխատում է դէմ տալ երկրներին. նորա վերայ ծիծաղելով ասում են ոմանք թէ «որով ծղէծնկօք ծառանաս, ծտիկ, քո ծովդ խելօք». արտուտը պատասխանում է. Ինչքան կարող եմ, այնքան եմ անում: * Այս առակով Գրիգոր Մագիստրոս հասկացնել է ուզում կաթողիկոսին, որ ինչ կարող էր, այն արաւ. բայց անզօր լինելով վտանգը փարատելու և տեսնելով, որ Գագիկ Բ. այլ ևս արձակուելու չէ, ինքն էլ իւր բերդի Բջնի ամրոցի բանալին և այլ հայրենի կալուածները կայսեր յանձնեց, և փոխարէնն ընդունեց մագիստրոսութեան պատիւ, գիւղեր, քաղաքներ և այլ կալուածներ Միջագետքում, ուր և հաստատեց իւր բնակութիւնը: Եւ այս էլ, նա, ինչպէս երևում է, ակամայ արաւ, որովհետև իւր թղթի մէջ գրում է տէր Պետրոսին թէ «հաւա-

* Այս են Մագիստրոսի խօսքերը. «Ի գուհհիկս պատմի առակեալ արտուտի զգուշութիւն երկնի յստորս կործանիլ. եւ նա անկեալ պորտ յորսայս զոտն ի վերայ յերկին ջանայ կարկառել, զի մի երկին յերկիր անկցի խափուցեալ. ի պարսաւ առեալ ոմանց, թէ որով ծղէծնկօք ծառանաս, ծտիկ, քո ծովդ խելօք. պատասխանեալ հաւն ասաց. Որքան կարեմ, զայն առնեմ»:

տալով իրրու անտուստ խոստմանց, յարեայ աճապարեալ, քաջագօտի գտեալ, ի սեփականն հասուցի հայրենի, զոր ի բաղմաց վաճառեալ և ծախեալ, և այժմ հալածական լեալ փախչիմք»:

Գրիգոր Մագիստրոսի այսպիսի անյաջող և տխուր դեսպանութիւնից յետոյ տէր Պետրոս, որ ժամանակի պարագլուխներէ մէջ իրրու կաթուղիկոս ընդհանուր ազգի միակ ներկայացուցիչն էր և Գագիկ Բ. արքայի առաջ Անւոյ ապահովութեան մասին երաշխաւոր էր կանգնել, իրերի վիճակը տեսնելով, բանակցում է բիւզանդական կուսակալի հետ, որ նստում էր Սամոսատում, և սակարկութիւն է անում Անւոյ մասին. «Ծանո՛թագաւորին, գրում է նորան տէր Պետրոս *, թէ մեզ զի՛նչ հատուցանէ փոխարէնս, և ես տաց զքաղաքս և զայլ ամուրս, որ յաշխարհիս են», Բանակցութեան վախճանն այն եղաւ, որ «գանձիւք և իշխանութեամբ» յօժարեցուցին կաթուղիկոսին և առան նորա հաւանութիւնն Անին յանձնելու: Գաւաճաններն՝ առանց ամենևին հարցնելու Գագիկ Բ. արքայի հաճութիւնը՝ Անւոյ քառասուն բանակներն ուղարկեցին Պոստանդին Թ. կայսեր և հրաւիրեցին նորան գալու և տիրելու Բագրատունեաց մայրաքաղաքին և երկրին: Գագիկ տեսնելով, որ

* Արիստ. Լաստ. 42:

Անւոյ բանայիններն արդէն իւր խորամանկ ակոյեանի ձեռքն են, ակամայ յօժարանում է ընդունել կայսրից այլ քաղաքներ Փոքր Ասիայում, թէև նոցա արժէքն «յոյժ պակաս էր ըստ արժէիցն Անւոյ և այլ աշխարհին»:

9.

Բիւզանդական արքունիքը՝ որքան որ անարդար կերպով զրկեց դժբաղդ Գագիկ Բ. արքային, այնքան էլ առատութեամբ վարձատրեց տէր Պետրոս Ա. կաթողիկոսին. «դշն-բհ-կու-ն և զբից քո-ն, ասում է ժամանակակից պատմիչը, * ին-ն-դի-նի-ն հարս-նի, յորմէ զտաշտին առին»: Թէ ի՞նչ է տէր Պետրոսի ստացած տրիտուրը կամ վարձատրութիւնը, այդ չեն յիշում պատմիչները. յիշում են սակայն, թէ նա ինչպէս շուտ պատժուեցաւ և իրեն խաբուած տեսաւ: Երբ որ Հայոց զօրքն իմացաւ թէ թագաւորն այլ ևս արևելք դառնալու չէ, ասում է պատմիչը, «լային առհասարակ ամենայն տունն Հայոց, և արարին ամենայն քաղաքն ժողով, ուր էին գերեզմանք թագաւորացն Հայոց, լային և զաթոռ թագաւորութեանն իւրեանց, և կոծ եդեալ առհասարակ լային զթա-

* Արիստ. Վաստ. 42:

գաւորն իւրեանց Գագիկ, և աւելն զաւելն իւր-
պայն նենգաւորացն Գագիկ: * Այդ նենգաւորների
մէջ առաջինը տէր Պետրոս կաթուղիկոսն եղաւ,
որ իւր վերայ զգաց ժողովլ գական լացի և անէծք-
ների ծանրութիւնը. այն պատիւն ու մեծարանքը,
որ նա տեսաւ բիւզանդական կուսակալներից առա-
ջին տարիներում, շուտով տեղի տուին անարգանքի
և անպատուութեան: Հէնց առաջին կուսակալներից
մէկը Վամենաս առջ ըստ առաջին պատուոյն մեծարէ
զՏայրապետն, և սիւնի գրով արարան լինել զնաւե
առ լաւաւորն և խաբանոտ հանել զնա ի Կալուստի: **
Անւոյ մատնութիւնից յետոյ շատ չքաշեց, որ տէր
Պետրոս ստիպուեցաւ հեռանալ դժբաղդ մայրաքա-
ղաքից. կայսեր կողմից նորան յայտնեցին, որ
հրամայուած է բնակութեան տեղ հաստատել Վար-
նոյ գաւառի Արծն աւանը: Եւ այն հայրապետը,
որ երբեմն իր ձեռքն ունէր Անւոյ քառասուն բա-
նալիները, հարկադրուեցաւ ակամայ տարագիր շըր-
ջել այս ու այն կողմ բիւզանդական կուսակալների
հրամանի տակ:

Որքան դառն պիտի լինէր հայրապե-
տի համար զգալ իւր սխալն և հառաչել՝ շատ
կարճ ժամանակ իւր սնտոյ փառքը վայելելուց

* Մատթ. Ուռհ. 115:

** Արիստ. Լատտ. 43:

յետոյ, Թերևս այդ տարածամ գիտակցութեան
և զգացմունքի յայտարարն է այն աւանդութիւնը,
որ պատմում են * թէ տէր Պետրոս, մտածելով
որ «գուցէ այլ ոչ թողուն զիս Հոռոմք ելանել
յարևելք» շտապում է իւր քեռորդուն Խաչիկին
ձեռնադրել կաթուղիկոս, և միևնոյն ժամանակ,
ինչպէս ասում են, երկաթէ ամաններով, մօտ չորս
հարիւր լիտր մեռն թագցնել Ախուրեան գետի
մէջ Անւոյ դրան մօտ, որ չլինի թէ Հոռոմների
ձեռքն ընկնի:

Արծն աւանումն էլ նա երկար չկա-
րողացաւ մնալ. 1051 թուին յունուարի 6-ին
ճաշի ժամանակ կալանաւորեցին հայրապետին և
տարան Խաղտոյ Առիճ բերդն, ուր և արգելեցին
նորան: Ականատես պատմիչն Արիստակէս Լաստի-
վերտցի պատմում է, որ նոյն օրն, երբ տէր Պետ-
րոս կատարում էր Զրօրհնէքի հանդէսը, մե-
ռոնի շիշը կոտրուեցաւ և նորա ձեռքը սաստիկ
վիրաւորեց. շատերն, այդ տեսնելով, գուշակեցին
թէ 2է բարւոյ ինչ նշան. և այդ իսկապէս կա-
թուղիկոսի ձերբակալութեան չարագուշակ նշանն
էր: Թէ ինչո՞ւ բիւզանդական դուռը պէտք համա-
րեց վարելու տէր Պետրոսին, որին այնքան պար-
տական էր, Անի քաղաքից Արծն, Արծնից Խաղտոյ

* Մատթ. ՈԼԱՀ. 122. Սմբատ Սպար. 51.

Առիճ՝ դարձեալ յայտնի չէ. սակայն գիտենք, որ այստեղ էլ նա երկար չմնաց. զատկական տօնի օրերը հանեցին նորան Խաղտոյ Առիճից և տարան Կ. Պօլիս:

Կաթուղիկոսի ուղևորութիւնն իւր վերջին արգելանից մինչև Բիւզանդիա շքեղ էր և իւր դիրքին համեմատ. Երեք հարիւր վառեալ թիկնապահ, հարիւր քսան վարդապետ, եպիսկոպոս, կրօնաւոր և երաժիշտ մարդիկ ջորիների վերայ նստած և երկու հարիւր հետևակ պաշտօնեաներ, ուղեկցում էին հայրապետին մինչև Կ. Պօլիս: Ուղեկիցների մէջ կային շատ իմաստասէր և գիտուն վարդապետներ, որոնց անունները մի առմի թուել է պաամիչը. * բիւզանդական մայրաքաղաքը դրդեցաւ Հայոց հայրապետին ընդունելու ժամանակ. «տարան զնա ի Սուրբն Սոփի և անդ հանդիպեալ թագաւորին և պատրիարքին, և իջուցին զնա ի փառաւոր տանն, և հրամայեաց թագաւորն տալ ծախս տէր Պետրոսի»: Երկրորդ օրը կաթուղիկոսը զնաց թագաւորի պալատն և այնտեղ ընդունուեցաւ մեծ շքով ու բազմեցաւ ոսկի գահաւորակի վերայ (սայլիտ, սելին), իսկ երբ մեկնեցաւ պալատից, նորա եպիսկոպոսներից մէկը տէր Եղիսէ առաւ արքունական ոսկի գահաւորակն իւր հետ տանելու:

* Մատթ. Ոււհ. 125:

սպասաւորներն ուզեցին արգելել. նա պատասխանեց, որ «Տայրապետական աթոռ է, և ոչ ոք է արժանի ի սմա նստիլ, բայց միայն տէր Պետրոս».* կայսրը իրաւացի համարեց տէր Եղիսէի պատասխանն և ասաց «Թոյլ տուք զառաքելական աթոռդ ի դմա». Այսքան եղաւ թերևս տէր Պետրոսի ուղեւորութեան արդիւնքը Բիւզանդիայում, որ գէթ Տայրապետական աթոռը կայսեր հրամանով կանգուն մնաց, թէպէտ ոչ ըստ առաջնումն ազատ:

Չորս տարի** մնաց տէր Պետրոս Կ. Պօլսում և շարունակ նոյն պատիւն ու մեծարանքն էր վայելում. երբ պալատ էր գնում, առջևից տանում էին Տայրապետական գաւազանը. երբ թագաւորը տեսնում էր նորան «երկիր պագանէր և հրաման տայր մեծամեծաց իւրոց ելանել ընդդէմ տէր Պետրոսի». Չորս տարուց յետոյ թագաւորն և պատրիարքը տուին տէր Պետրոսին շատ ընծաներ, և «ազգի ազգի զարգարանս» և «իշխանութիւնս տայր ազատաց»*** Այս ամենից երևում է, որ Հայոց կաթողիկոսը, թէև կալանաւոր էր Բիւզանդացւոց

* Ըստ Սմբատ Սպար. եր. 51 «Աթոռ Տայրապետական է, չէ պարտ նստիլ ի վերայ այլ մարդ»:

** Ըստ Սր. Լաստ. «ամ. երիս». ըստ Սմբ. Սպար. «ամիսս չորս». եր. 51:

*** Արիստ. Լաստ. 60. Մատթ. Ուռհ. 122. Սմբատ Սպար. 51.

մօտ, բայց ոչ անարգուած. նա մի պատուաւոր
գերի էր, որ երկար ժամանակ արգելուեցաւ Ա.
Պօլսում այն պատճառով, որ Կոստանդին Մոնոմախ
կասկածէր թողուլ ի Հայս, թէ երթեալ ապրս
տամբեցուցանէ զԱնի». Թէ ինքը տէր Պետրոս,
որ 3-4 տարի արտաքին շքով ու պատուով մնաց
Բիւզանդիայում, ինչ խորհուրդներ ունէր և ինչ
գործ կատարեց այնտեղ, լուում են պատմիչները.
Յայտնի է միայն, որ նորա վերայ մեծ կասկածան-
քով էին նայում բիւզանդական արքունիքում. այն-
պէս որ Վասպուրականի վերջին թագաւորի Սենե-
քերիմի որդին Ատոմ Արծրունի երաշխաւոր է լի-
նում տէր Պետրոսի մասին («առեալ զնա յերաշ-
խիս») և իւր հետ տանում է Սերաստիա. Այն-
տեղ Ատոմ բնակութեան տեղ տուեց կաթուղիկո-
սին ս. Նշանի վանքը, Երկու տարի ապրեցաւ
Սերաստիայում տէր Պետրոս Ա. և 1059 թուին

* Պատմիչները որոշ յայտնում են, որ տէր Պետրոս
թաղուեցաւ Սերաստիայում. սակայն նորա շիրիմը ցոյց
են տալիս վարագայ վանքում, հետեւեալ տապանադրով
(Հ. Ն. Սարգս. Տեղագր. 256) «Թ-ին ԴՃՀԱ. Այս է հան-
գիստ տեառն Պետրոսի կաթուղիկոսին, որ Ե Տրապիզոն
զգեամն ճրոխ արգելաց առաջի վասիւ արքային». Այս
տապանադրի թուականն անճիշտ է. 471 ոչ թէ նորա
մահուան տարին է, այլ յայտնի Զրօրհնէքի, ոյն է 1022
թուականը. Թէ իսկապէս տեղի ունեցած է տէր Պետրո-

վախճանուելով, ամիոփուեցաւ նոյն տեղում * իբրև մի պանդուխտ, տարագրեալ հովիւ, որ իւր կեանքի վերջին օրերը կարողացաւ հանգիստ անց կացնել միմիայն մի այնպիսի հայ իշխանի երաշխաւորութեան շնորհիւ, որի համար նոյնպէս նոր էր Սեբաստիայի բնակավայրը:

Է.

Անւոյ մատնութիւնից տասն և չորս տարի յետոյ կնքեց տէր Պետրոս իւր մահկանացուն: Այդ ժամանակամիջոցում Հայոց երկիրն ալէկոծեալ ծովի նման ծփում էր խռովութեան և տագնապների մէջ. դեռ 1045 թուին, երբ բիւզանդական զօրքերը նոր էին եկել Անին առնելու, թուրքերը Վասպուրականի վրայով հասան մինչև Բասեն, և հրով, սրով և գերութեամբ քանդեցին:

սի նշխարների փոխադրութիւնը դէպի Վարազ եւ սր ժամանակ, մենք չգիտենք. հաւաստին այն է, որ Սեբաստիայի շիրիմն է նորա վերջին բնակարանը, եւ ոչ մի ժամանակ յարմարութիւն եւ առիթ չէր կարող լինել փոխադրութեան մասին մտածելու, Վարազայ տապանաքարը լոկ մի յուշարար է, որ տէր Պետրոս արգելել է ճորոխ գետը 471—1022 թուին, եւ այդ յուշարարը պէտք էր այն ս. Նշանի համար, որն ըստ աւանդութեան պահւում է Վարազայ վանքում:

ապականեցին քսան և չորս գաւառ: * Այնուհետև
միքանի անգամ արշաւեցին երկրի վերայ մի կող-
մից յունական բանակները և միւս կողմից թուրք
կիսավայրենի հրոսակները: Քրիստոնէութեան և
հեթանոսութեան, կամ քաղաքակրթութեան և
վայրենութեան ազնիւ պայքար չէր նոցա ընդհա-
րումը, այլ անպաշտպան մնացած, ամեն կողմից
անակնունելի վտանգներով պաշարուած, իւր առաջ-
նորդների շնորհիւ բաժան բաժան եղած մի ժողո-
վքրդի անխնայ սպառումն էր այդ:

Յուսահատութիւնն այնպէս էր պատել ամենքին,
որ ժամանակակից ողբերգակ Լաստիվերտցին յաճախ
բացագանջում է այն օրերի համար. «վայ և աւաղ
դուռն լուսոյ տարն»: Այն շէն ու ծաղկեալ քաղաք-
ները, որոնք պարծանք էին երկրին, հետզհետեւ
ամայանում էին: Բնակիչները, որ իրենց բարեկե-
ցութեամբն ամենի ընդհանուր նախանձն էին շար-
ժում, «չարագանեալք և կործանեալք և քեռտան
աշխարհի եղեալք» ոչնչանում էին. «աշխարհ ամե-
նայն ի խաղաղութեան բնակէ, հառաչում էր այն
ժամանակ նոյն պատմիչը, և մեք գերիք և կալա-
նաւորք և սրակոտորք և տնաւերք և յընչից կո-
ղոպտածք»: այդպիսի ծանր թշուառութեան ժա-
մանակ՝ անցած գնացած երջանիկ օրերի քաղցր

* Արիստ. Լաստ. 44:

Միշատակը բնականաբար կրկնուում էր բոլորի սու-
գըն իւր խօսքերի մէջ ամփոփող նոյն պատմիչի
բացագանչութեամբ. «Մեր թագաւորացն ամռոք,
որ զօրացն բազմութիւն, որ հայրապետական արհաւ-
ճէ է հրաշակն» * Սակայն զուր էր այդ որոնել-
կարճ ժամանակի մէջ արդէն քանդուել ապական-
ուել էր երկար դարերի շինածն ու հաստատածը՝
բազմամարդ քաղաքներն ու աւանները դատարկա-
ցել, եկեղեցիներն անշքացել և վանքերն հողի հա-
ւասար եղել, Անկշոելի կորուստների առաջն առ-
նելու այլ ևս հնար չէր մնացել այն պատճառով,
որ ինքը ժողովուրդը բազմութեամբ տեղից ելնում,
գաղթում էր հայրենիքից դուրս դէպի օտար, ան-
ծանօթ երկրներ, տեսնելով, որ իւր իշխաններն
անմիաբան էին, հողէն առաջնորդներն և կրօնա-
ւորներն անգործ, և թշնամին չափազանց յանդու-
գըն և անպատկան:

Այս ամեն աղէտներին ականատես և ական-
ջալուր եղաւ տէր Պետրոս մերթ Անւոյ բազմա-
մարդ հայրապետանոցից, մերթ Արծնի և Խաղտո-
յառճի արգելարանից և մերթ «յօտար աշխարհ
հեռացեալ իբրև զգերի և զկալանաւոր» Առսփորի
ափերում արքայական շքով ոսկի բարձերի վերայ
հիւրասիրուելու ժամանակ, Անշուշտ, բոլոր այդ

* Արիստ. Լաստ. 48, 50, 75 եւլն.

դառն վայրկեաններում նա զգաց իւր աշխարհաւեր սխալի մեծութիւնը. զգաց և մորմոքաց այնպիսի մի ժամանակ, երբ այլ ևս կարող չէր իւր ժողովրդի վշտացած սիրտն սփոփելու. Այդ տարածամ զղջումը, ապագաների համար միայն իրատական այդ ներքին ապաշաւանքն է, անշուշտ արտայայտուած և նորա շարականների մէջ.

Թէ ե՞րբ կարողացաւ նա յօրինել իւր այդ շարականներն, իսկապէս չգիտենք. սակայն հաւանական է, որ նա գրական պարապմունքների նուիրուած լինի առհասարակ 1045 թուից յետոյ և իւր տարագրութեան տարիներում. Այդ մենք տեսնում ենք նախ Գրիգոր Մագիստրոսի ու նորա միջև տեղի ունեցած նամակագրութիւնից, որից սակայն չի երևում թէ նա շարականներ է յօրինել և երկրորդ այն յիշատակարանից, որ նա գրել է՝ ս. Յովհաննոսկերերանի ճառերի առթիւ. Այդ յիշատակարանը, * որ գրուած է 1048 թուին, թէև հակիրճ, բայց նշանաւոր ապացոյց է, որ տէր Պետրոս իւր կեանքի վերջին տարիներում աշխարհիս փառքին և մեծութեանն այլ ևս այն նշանակութիւնը չէր տալիս, ինչ որ յառաջ, նա մեծ փափագով ձեռք է բերում ս. Ասկերերանի ճառերը իրրև «ստացուած ոչ առ ժամանակեայ». «նա

* Զարբ. Թարգ. նախն. 606:

խոստովանում է, որ առժամանակեայ ստացուածն «օտար է բնութեանս մերոյ», և այդ գործն է, որ իրեն յիշատակը պիտի պահէ. «արձան անմահ կանգնեցի, ասում է, յիշատակ հոգւոյ իմոյ».
«զայլովք զամենեքումք զանց արարի», նորան արգէն պարզ երևում է այն, որ ամեն բան կորստական է և եղծանելի. «զամենայն վայելչականս անպատուեմ ի ստորինս կալ մնալ». ուստի և ինչ որ ունէի երբեմն, տուի, ասում է, և «զբազմապատիւ զմարգարիտն փոխանակ ամենեցուն փոխանակեցի, և եղէ մեծաշահ վաճառական, և զուարճանամ այսոքիւք առաւել քան որովք բազմօք բերկրին»:

Անւոյ մատնութիւնից գրեթէ երկու տարի յետոյ այսպիսի խոստովանութիւն արձանագրելով, տէր Պետրոս Ա. նոյն յիշատակարանի մէջ ոգևորութեամբ յիշում է ծիծեռնակի օրինակը, որ գարուն է բերում. բայց նա չի զուարճանում աշխարհային բնութեան պարզեւած գարնան վայելչութիւններով. նորան հաճելի է «հոգւոյ ակամբ տեսանել զգարունն հոգւոյ, յորժամ սառնասառոյց բնութիւնս այս սկսանի ընձիւղիլ ի ծագմանէ արեգականն արգարութեան... որպէս զի ջեւեալ ոգիւ և զուարճացեալ ճառագայթիւք բանին, որ յետէս լինիցի՞ զոր խաղացեալ է կեանն յաւիտենից, և որ ժանտորապէս է ժամոս զպրոսպն պոտեալ, սաղարթա-

լից բնակեցուք ի տան Տեառն»։ Գետադարձ կա-
թուղիկոսի այսպիսի վսեմ փափագը պտնուղ է իս-
կապէս նորա դառն փորձերի և տարաժամեալ գի-
տակցութեան, երբ ինքն աւելի պակաս հնար ունէր
ոգևով տաքանալու և ուրիշներին տաքացնելու
խօսքի ճառագայթներով, և իւր հօտը պատրաս-
տելու իրրև «ջուր խաղացեալ ի կեանսն յաւիտե-
նից»։ Բայց նա իւր այս անագանեալ զգացմունքն և
խոստովանութիւնը գեղեցիկ կերպով գրոշմեց և
արձանացուց ապագաների համար ոչ այնքան յի-
շեալ պերճախօս յիշատակարանով, որքան իւր
ոգելից շարականներով։

Երեք խումբ են նորա յօրինած հոգևոր
երգերը՝ Մարտիրոսաց, Ննջեցելոց և Մանկունք
կոչուած շարականներ, սակայն հաւաստի կերպով
ընդունել, որ այդ երեք խմբի շարականները բոլորն
էլ Գետադարձ հայրապետն է յօրինել, կարելի չէ
նախ այն պատճառով, որ նոյն խմբերի մէջ են Սարգիս
Սևանեցու երգած «Սարսափելի որոտմամբ և ահա-
գին զօրութեամբ» * և Յակոբ Սանահնեցու
«Յանսկզբնական ծոցոյ Հօր խոնարհեալ Բանդ» **
շարականները և երկրորդ, որ նորան ընծայած եր-
գերը բոլորը միանման բարբառ չունին և իրենց ոճի

* Շարական 665.

** Նոյն 672.

կողմից տեղիք են տալիս զանազան հեղինակներ
ենթադրելու: Չնայելով այս ամենին, եթէ նորան
յատուկ շարականներից ծաղկաքաղ անելու լինինք,
կըտեսնինք, որ տէր Պետրոսի յօրինած հոգևոր
երգերի մէջ երևում է նուրբ ճաշակ, վսեմ գա-
ղափար և նորա իրեն հոգեկան վիճակի բնական
արտայայտութիւն:

Գետազարձ հայրապետը, որ ունէր տոհմական
ճոխութիւն, հինգ հարիւր գիւղ և առատ գանձեր,
որ իրրև հոգևոր տէր ոչ միայն հինգ հարիւր գա-
ւառատեսուչ եպիսկոպոսներ ունէր ձեռքի տակ,
այլ և մի ամբողջ երկրի կապողն ու արձակողն էր,
կամ ըստ Գրիգոր Մագիստրոսի իրրև «սուրբ հայ-
րապետ՝ մեր ծայրութեան» որոշող էր, օգեաց ու
այծեաց, բացող մեզ դրանն արքայութեան», Անույ
մատնութիւնից յետոյ, երբ մի անգամից կորստեան
մատնեց աշխարհային ամեն բան, ինչ որ ունէր, և
նոյն իսկ իւր հոգևոր իրաւասութեան առաւելու-
թիւնները, իրաւունք ունէր, երկար և երկար
մտածելով աշխարհիս ունայնութեան վերայ և իւր
փառքերի սնոտի լինելը պատկերացնելով, Իմաս-
տունի նման բացազանչել «Աւնայնութիւն ունայ-
նութեանց» կամ Արտաշէսի նման ազաղակել
«Աւաղ փառացս անցաւորի»: Սակայն նա նոցա այդ
միտքը իւր ձեռով, իւր աստիճանին և կոչմանն հա-
մեմատ ամփոփել է այնպիսի մի հոգևոր երգի մէջ:

որ ամեն ժամանակ և անդադար հնչում է եկեղեցու-
ցում ի խրատ ամենի. «Ուրի եղևուս անպիտանացաւ,
գեղեցկայարմար շինուածոյս քակտումն, ի հասարակնս
ճեմարեցաւ, ի յալիաց մեղաց, յոր ընկղմեցայ, և
այժմ աղաչեմ զՍտեղծողդ ամենից, ընկա՛լ և հանգ՛ն
զհրաշարեալ հոգիս յեջնասորեղեան ասեղէն խորանս, ուր
ժողովքն են սրբոց ի խաղաղութեան հոգևով հե-
ղութեան յերկնից բարութիւնսն»։ Հեռաւոր պան-
դրխտութեան մէջ կարօտ իւր հայրենական հաճելի
յիշատակներին, բնական է, որ տէր Պետրոս Ա.
բացագանչէր և կրկնէր միշտ. «Պատմեալս յազգասորե-
մե, լիեալ խոյն զկեանս աշխարհի, և մարմին ունայնու-
թեան դարձաւ ի հող ուստի ստեղծաւ»։ ուստի և
աղօթում է առ Աստուած. «յիս մարդասիրեալ
բաղմագութ Փրկիչ, և փարատեցո՛ զցաւս անձին
իմոյ»։ Տասն և չորս տարի շարունակ խղճահարու-
թեան մէջ, զջղման և ապաշաւանաց կրքերով յու-
ղուած նորա սիրտը բարախում էր միմիայն մահուան
ակնկալութեամբ, որի սարսափները նորան պաշարել
էին. նա տեսնում է իւր ոչնչութիւնը Աստուծոյ
ահաւոր մեծութեան դատաստանի առաջ, երբ
Ատեանն զնի և դպրութիւնք հրաշիցն բանին և
դատաւորն ահեղ յակնարկելն իւր յարարածս հա-
տուցանէ, վարձս ըստ գործոց իւրաբանչիւրոցն»։
Դատողի արդարութեան և զթութեան պատկերը
միանգամից նորա աչքի առաջ են գալիս։ Առջոյն

եհաս վերին Առջողին, կոչնատէրն ահեղ, կոչողն
ահաւոր, դատաւորն անաչառ, դատաստանն արդար,
հրեշտակք անողորմ դատեն զմեղաւորս: Եւ ինչ-
պէս ամեն մահկանացու՝ նա էլ, որ հոգևոր իշխա-
նութեամբ լայնատարած երկրի վերայ բազմութիւ
գաւառների և բիւրաւոր ժողովրդի հրամայողն ու
առաջնորդն էր, այդ պերճափայլ, արքայանման
հայրապետը, յիշում է, որ Աստուծոյ հրամանով
ի հող պիտի դառնայ և՛ ինքը, ուստի յոյսը գնում
է յաւիտենական բժշկի վերայ, որ իւր ցաւերը
փարատէ. «Մերձեցայ ես ի դուռն գերեզմանին,
երգում է տէր Պետրոս, և եհաս ինձ ժամանակ
մտանել ի յարգանդ երկրի, յորմէ ստեղծեալ եմք
ամենեքեան. բժիշկ իմաստուն և ճարտարապետ,
բժշկեա՛ զհոգւոյ զիմ զհիւանդութիւնս, արարող և
յոյս փրկութեան մերոյ». իսկ մի ուրիշ տեղ ողո-
քելով արդար դատաւորին, որ միշտ գթած է,
ազազակում է նոյն քրիստոնէական յուսով. «Զլու-
սաւորեալքս ծննդեամբ սուրբ աւագանին մի՛ բար-
կութեամբ խրատեր և մի՛ սրտմտութեամբք քով
յանգիմաներ, ի յոր ժամ հրաշալի ձայնիւ փողոյն
յառնեն մեռեալքն և կան առաջի ահաւոր քո բե-
մին»: Տէր Պետրոս իւր սխալը խոստովանող և
ճշմարտապէս զղջացող իմաստուն քրիստոնեաներից
մէկն է երևում այս երգերի մէջ. մի տեղ անոխա-
կալ և բարեգութ Տիրոջ ողորմութիւնն հայցելով,

նա երգում է. «Նախաստեղծին այցող Փրկիչ,
փրկե՛ա՛ զմեզ յորժանահաս նեղաց մերոց» ինքն իրեն
անարժան է համարում, և երկրին ու եկեղեցուն
հասած փորձութեան համար սրբերի բարեխօսու-
թիւնն է դնում միջնորդ Աստուծոյ առաջ. «Եկայք
հաւատացեալք, յորդորում է նա, կատարեսցո՛ւք
զյիշատակ սրբոց վկայից, զի ի ձեռն սոցա քոյն
մեզ դուռն ողորմութեամբ»։ Սոցա աղօթիւք, Փրկիչ,
խնայե՛՛մ ի սուրբ եկեղեցի քո, զոր ստացար պատուական
արեամբք քո սրբոյ», երգում է գետադարձ հայ-
րապետն և հաւաստի անում մեզ, որ սրբերն իբրև
բարեխօս «հայցեն միաբան դիւանալիւն մեռայն
աշխարհի», որին այնքան կարօտ էին Անւոյ մատնու-
թիւնից յետոյ ս. եկեղեցու ժողովուրդը։

Տէր Աետրոսի շարականներից այս հակիրճ
հատուածներն յառաջ բերելով, կարող ենք ընդ-
հանրապէս գաղափար ունենալ թէ ի՞նչպիսի հոգի
ի՞նչպիսի սիրտ և միտք էր բնակում նորա մէջ։
Մենք կասէինք, որ այդ մարդու սխալանքները, որ
այնքան եղբրական արդիւնքներ ունեցան, մասամբ
հետևանք էին ժամանակի վատթար ազդեցութեան,
և չէին կարող յառաջանալ միմիայն նորա իրեն հո-
գեկան յատկութիւններից։

Եկեղեցական պատմութեան այդ հետաքրքիր
շրջանը գեռ շատ կարօտ է լուստրանութեան, որ-
պէս զի կարելի լինի լաւ հասկանալ թէ ինչո՞ւ

այն ժամանակ, երբ Արշակունեաց գահը վերացաւ
և Հայոց բազմաւ անցաւ մոգութեան աշակերտող
Պարսից արքունիքի ձեռքը, կարելի եղաւ կարճ
ժամանակի մէջ տասն անգամ աւելի զօրեղ մի հո-
գեոր բանակ կանգնել թշնամու առաջ և փրկել մի
քրիստոնեայ երկիր և ժողովուրդ հեթանոս տէրու-
թեան շատ վտանգաւոր հարուածներէն, իսկ երբ
մեծափարթամ դարերի հոյակապ գահերն՝ Արծրու-
նեաց, Բագրատունեաց, Աւանանդու և այլոց, խո-
նարհեցան թուրք հրոսակների և բիւզանդական
խարդաւանքների առաջ, այնքան դիւրութեամբ և
այնքան անարժան կերպով անշքացաւ եկեղեցին,
գատարկացաւ երկիրն, և Հայոց «մեծ և հրաշալի
աթոռը» որ գլուխն էր երկրի բոլոր իշխանութիւն-
ների, գրեթէ անգառնալի տարագրուեցաւ, իւր
հետ տանելով արևելեան քրիստոնեաների բազմը
և երջանկութիւնը:

Երբ այս լուսարանութիւնը մի օր կատարե-
լապէս տեղի ունենայ, այն ժամանակ թերևս
յայտնուի, որ տէր Պետրոս Ա. ակամայ զոհ էր
ժամանակի համատարած և անբռնաբարելի շա-
րութեան:

Իսկ մինչև այդ՝ աչքի առաջ ունենալով այն
զղջումն և ապաշաւանքը, որ միշտ և յաւիտեան
լսելի են նորա երգերի մէջ, հաւատում ենք, որ
նորա յանցանքը կընկրուի նորան, Յաւիտեան ար-

դ սր և ողորմած մեր Փրկիչը որ մի խօսքով մի
ճշմարիտ խոստովանութեամբս բաց արաւ աւաղակի
առաջ իւր զրախտի գոները հաւատում ենք որ
չ գիտի խստանայ Սերաստիոյ շիրմից դարեր շա-
րունակ «յիս մարդասիրեան բազմազուլթ Փրկիչ»
անլուռ աղաղակողին:



p of a ... the ... of the ...
 ...
 ...
 ...
 ...
 ...

...
 ...
 ...
 ...



...
 ...
 ...
 ...

...
 ...
 ...
 ...

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is faint and difficult to decipher but appears to be organized in a list or table format.

